

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Թե՛ ներպետական օրենսդրությունը, թե՛ ժամանակակից միջազգային-իրավական չափանիշները, անմեղ համարելով հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձին, վերջինիս օժտել են նվազագույն մի շարք իրավունքներով, որոնց շարքում հատկապես կարևորվում է պաշտպանության իրավունքը:

Փաստաբանական գործունեությունը «որպես իրավապաշտպան գործունեության տեսակ ներառում է նաև քրեական գործերով պաշտպանությունը» («Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 2, կետ 3), իսկ ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև միջազգային մի շարք հանրաճանաչ իրավական ակտեր² սահմանում են մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Այս ոլորտում փաստաբանի գործունեությունն օժտվում է հատուկ կարևորությամբ և մի շարք առանձնահատկություններով, քանի որ անձի իրավունքներն էականորեն սահմանափակվում են պետական մարմինների գործունեության արդյունքում: Այս սուբյեկտի առկայությունը մեծ կարևորություն է ներկայացնում քրեական դատավարության համար, ինչը պայմանավորված է երկու գործոնով. նախ՝ այն մեղադրյալի իրավունքների և իրավաչափ շահերի ապահովման առաջնային երաշխիք է, ապա ապահովում է մրցակցության սկզբունքի իրացումը՝ վերջին հաշվով հիմք հանդիսանալով դատական ճշմարտության բացահայտման համար³: Այս առումով դատավարագետ Մ. Ս.

¹ ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի սապի-րանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Հրայր Ղուկասյան:

² Այդ թվում՝ 1948 թվականի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», 1950 թվականի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան, 1966 թվականի «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը:

³ 2009 թվականի հուլիս ամսին Ռուսաստանի Դաշնության Նովոբորո թաղաքում տեղի ունեցավ փաստաբանության միջազգային նստաշրջան, որտեղ արծարծվեց այն գաղափարը, որ փաստաբանությունն ու արդարադա-

Ստրոգովիչը իրավացիորեն նշում է. «Մեղադրյալի պաշտպանության իրավունքն ապահավում է ճշմարտության բացահայտումը, ինչպես նաև օրինական, հիմնավորված և արդարացի դատավճռի կայացման կարևորագույն երաշխիք է»¹:

Պաշտպանություն իրականացնելիս պաշտպանը գործ ունի մեղադրյալի հետ ոչ միայն որպես քրեական դատավարության սուբյեկտի, այլև որպես առանձին անհատի:

Հետևաբար, նորմատիվ բազան, որքան էլ կատարյալ լինի, ի վիճակի չէ կարգավորել այդ գործունեությունն ամբողջությամբ՝ հաշվի առնելով այն իրադրությունների բազմազանությունը, որոնք ի հայտ են գալիս քրեադատավարական հարաբերությունների ընթացքում, և առհասարակ իրավական դոգմատիկան ի վիճակի չէ կարգավորելու հասարակական հարաբերությունների առանց բացառության բոլոր կողմերը:

Այս տեսանկյունից ամերիկյան իրավաբանների խորին համոզմամբ՝ փաստաբանի գործունեությունն առավել շատ պետք է հենվի բարոյական հենքի, քան զուտ օրենսդրական հիմքի չոր իմացության վրա²:

Այդ է պատճառը, որ այնպիսի հարցեր, ինչպիսիք են պաշտպանի վարքագիծը տարբեր իրավիճակներում, օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացման ձևերը, պաշտպանությունն իրականացնելու թույլատրելի մեթոդների ու միջոցների ընտրությունը, թույլատրելի հնարքների կիրառումը դուրս են օ-

տությունը փոխադարձաբար կապված են միմյանց հետ և չնայած պաշտպանությունն իրականացնում է միակողմանի գործառույթ և երբեմն խանգարում օրյեկտիվ ճշմարտությանը, սակայն արդարադատությունն առանց պաշտպանության ինստիտուտի հիմնահատակ կկործանվի (տե՛ս Шаров Г. Минюст об адвокатской деятельности // Новая адвокатская газета, № 15, 2009, էջ 19):

¹ St' u Строгович М. С., Проблемы судебной этики, Москва, 1974, էջ 236:

² St' u Patterson Th. Some problems of legal ethics, Pochester N.Y., 1917, էջ 3:

Կարծում ենք, այդ է նաև պատճառը, որ ԱՄՆ-ում գոյություն չունի որևէ նորմատիվ-իրավական ակտ, որտեղ ամրագրված լինեն փաստաբանի իրավունքները դատավարության ընթացքում. դրանք հիմնականում բխում են մասնագիտական էթիկայի նորմերից, ինչպես նաև ձևավորված ավանդույթներից և նախադեպային իրավունքից (տե՛ս Wharton F., James M. Criminal Procedure, San-Francisco, 1989, էջ 288):

րենսդրության շրջանակներից: Նմանատիպ հարցերի կարգավորման համար պաշտպանը կիրառում է մի շարք այլ գիտությունների կողմից մշակված հանձնարարականները, որոնց շարքում առանձնանում է էթիկան:

Էթիկան փիլիսոփայական ուսմունք է, որի ներքո ամբողջացվում է «բարոյականություն եզրույթը»¹: Կարելի է ասել, որ էթիկան անձի բարոյական վարքի չափորոշիչ համակարգն է:

Էթիկայի կանոնները, որպես վարքագծի ընդհանուր սոցիալական նմուշներ, ձևավորվել են մարդկության երկարատև պատմական զարգացման ընթացքում՝ «չարի դեմ պայքարի, ինչպես նաև բարու, մարդասիրության, արդարության, մարդկանց երջանկության հաստատման համար պայքարի ընթացքում»²: Ի տարբերություն իրավունքի՝ էթիկայի նորմերը բավական երկար ժամանակ մասնագիտացված պաշտոնական արտահայտման ձևեր չեն ունեցել, այլ միայն գոյություն են ունեցել մարդկանց գիտակցության մեջ, ինչպես համոզված էր Ի. Կանտը³:

Գիտության յուրաքանչյուր ճյուղ ունի էթիկայի իր համար ձևավորված կանոններն ու նորմերը, որոնք համախմբվում են մասնագիտական էթիկա եզրույթի ներքո, ինչը որոշակի մասնագիտության տեր անձանց վարքագծի յուրահատուկ բարոյական օրենսգիրք է, որոշակի սոցիալական խմբի վարքագծի կանոնների համակցություն⁴:

«Իրավաբանական էթիկան մասնագիտական էթիկայի տեսակ է, որն իրավաբանի բարոյական բնութագիր ունեցող աշխատանքային գործունեությունը կարգավորող և աշխատանքային գործու-

¹ Էթիկա եզրույթը, որն առաջացել է հունարեն «էթոս» բառից և թարգմանաբար նշանակում է սովորույթ, բարոյական բնավորություն՝ որպես գիտության առանձին ճյուղի անվանում, առաջին անգամ կիրառել է Արիստոտելը՝ մ.թ.ա. 4-րդ դարում: Նա էթիկա ասելով՝ հասկանում էր գիտություն, որն ուսումնասիրում է բարեգործությունը, երջանկության հասնելու համար օգտագործվող միջոցները: (տե՛ս Grant A., *The ethics of Aristotle*, London, 1857, էջ 258, *Адвокатская деятельность*, под ред. В. Н. Буробина. Москва, 2003, էջ 171, *Кобликов А. С., Юридическая этика*, Москва, 1999, էջ 11):

² St' u Murray P., *Basic trial Advocacy*. Harvard, 1995, էջ 37:

³ St' u *История политических и правовых учений*, под ред. В. С. Нерсесянца, Москва, 2006, էջ 511:

⁴ St' u *Кобликов А. С., Юридическая этика*, Москва, 1999, էջ 25:

նեությունից դուրս վարքագծի կանոնների, ինչպես նաև այդ բնագավառում բարոյականության պահանջներն ուսումնասիրող գիտության ճյուղի համակցություն է»¹:

Իրավաբանական էթիկան կարելի է անվանել տարբեր մասնագիտացում ունեցող իրավաբանների «բարոյականության սահմանադրությունը», որի նորմերի հիման վրա ձևավորվում են առանձին մասնագետների (օրինակ՝ փաստաբանների, դատախազների, դատավորների) վարքագծի կանոնները:

Փաստաբանական էթիկան, որն աչքի է ընկնում պրակտիկայի ընթացքում ծագող բազում կոլիզիաների առկայությամբ, դատական էթիկայի բաղկացուցիչ մաս է: Վերջինս փաստաբանական գործունեությունը կարգավորում է բոլոր այն դեպքերում, երբ կոնկրետ իրավիճակը չի կարգավորվում իրավական նորմերով²: Ինչպես արդարացիորեն նշվել է իրավաբանական գրականության մեջ, փաստաբանական էթիկայի հիմնական նպատակը և խնդիրը փաստաբանին օրենքի և բարոյականության շրջանակներում պահելն է³:

Ժամանակակից պայմաններում մասնագիտական գործունեության բարոյաէթիկական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունն այն է, որ շատ երկրներում մասնագիտական ոլորտների հետ կապված էթիկական նորմերը ձեռք են բերում ձևականացված որոշակի բնույթ՝ էթիկայի վարքագծի կանոնագրքերում ամրագրվելու միջոցով⁴:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 32:

² Տե՛ս Смоленский М. Б., Адвокатская деятельность у адвокатура в Российской Федерации, Ростов-на-Дону, 2004, էջ 71:

³ Տե՛ս Бойков А. Д., Этика профессиональной защиты по уголовным делам, Москва, 1978, էջ 46, Matthew T. Nagel, Double Deontology and the CCBE, Harmonizing the Double Trouble in Europe, «Washington University Global Studies Law Review», January 2007, Volume 6, Issue 2, էջ 457:

⁴ Անկախությունից հետո Հայաստանում փաստաբանի վարքագծի կանոնագիրք մշակելու երեք փորձ է արվել. առաջինը 1999 թվականի մայիսի 1-ին ընդունվեց ՀՀ փաստաբանների միության ընդհանուր ժողովում, որը փոփոխությունների ենթարկվեց 2000, 2001, 2003 թվականներին: Այն հիմնված էր 1998 թվականի «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների վրա, սակայն բավականաչափ խորը չէր կարգավորում փաստաբանական գործունեության էթիկական հիմնախնդիրները, փաստաբանների էթիկական վարքագծի չափորոշիչների հարցում:

Էթիկայի կանոնագրքերը, սահմանելով մասնագիտական չափանիշներ, յուրահատուկ ուղենիշ են փաստաբանական գործու-

ղբևորում էր մակերեսային մոտեցում, չէր տալիս էթիկայի սկզբունքների բնորոշումն ու բովանդակությունը:

Արդեն, 2006 թվականի փետրվարի 18-ին Հայաստանի Հանրապետությունում փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից ընդունվեց փաստաբանների վարքագծի կանոնագրքի նոր տարբերակ: Այս մեկն, ի տարբերություն նախորդի, հստակ բաժանված է ընդհանուր և հատուկ մասերի ու առավել հստակ էր սահմանում փաստաբանի ու վստահորդի, գործընկերների, դատարանի, երրորդ անձանց միջև փոխհարաբերությունների էթիկական կանոնները: Կանոնագրքի ներածության մեջ նշվում էր, որ ՀՀ փաստաբանների պալատը ելնում է իրավաբանների եվրոպական ընկերակցության կողմից ընդունված կանոններում ամրագրված սկզբունքներից:

Այնուհետև, նույն մարմնի կողմից 2012 թվականի փետրվարի 11-ին ընդունվել է փաստաբանների վարքագծի նոր կանոնագիրքը, որը ևս բավական հեռու է կատարյալ համարվելուց: Այս կանոնագրքի աչքի ընկնող բնութագրիչ հատկանիշներից է փաստաթղթի ծավալը. այն շատ ավելի ծավալուն է, քան տարածաշրջանային մյուս երկրների կանոնագրքերը (Վրաստան, Ադրբեջան, Մոլդովա, Ուկրաինա): Սակայն, կանոնագիրքն իրականում պետք է պարունակի միայն ղեկավար սկզբունքներ և դրույթներ՝ բավականաչափ տիրույթ թողելով սեփական զարգացման համար: Հետևաբար, կանոնագրքի այսաստիճան մանրամասն կարգավորումները հնարավորություն չեն տալիս այն դիտարկել որպես «կենդանի գործիք», որի միջոցով մասնագիտական հասարակությունը հնարավորություն կունենար ինքնորոշվելու: Այս առումով նշենք նաև, որ թերևս միջազգային չափանիշները որևէ հստակ պահանջ չեն ներկայացնում, այնուամենայնիվ, ընդհանուր եվրոպական մոտեցումն այն է, որ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերող ածանցյալ փաստաթղթերը պետք է ունենան արդյունավետության բարձր մակարդակ:

Բացի այս կարելի է նաև իշատակել Ամերիկյան փաստաբանների մասնագիտական էթիկայի տիպային կանոնները, Եվրոպական ընկերակցության երկրների փաստաբանների կանոնների ընդհանուր կանոնագիրքը, Եվրոպական ընկերակցության երկրների փաստաբանների իրավաբանների վարքագծի կանոնագիրքը, Փաստաբանների դերի մասին հիմնական դրույթներն ընդունված ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսում 1990 թվականի օգոստոսին, Իրավաբանների միջազգային ասոցիացիայի իրավաբանական չափանիշները, Մենդոզայում ընդունված փաստաբանական էթիկայի կանոնները (այս կանոնագրքի գործողության ոլորտը լատինական Ամերիկայի երկներն են, Իսպանիան, Պորտուգալիան) և այլն:

նեության համար: Իսկ եթե առաջանում են այնպիսի հարաբերություններ, որոնք իրենց անդրադարձը չեն գտել կանոնագրքերում, ապա պետք է առաջնորդվել սկզբունքներով, ձևավորված սովորույթներով ու ավանդույթներով¹:

Թերևս էթիկան միանշանակ գիտություն է, սակայն քրեական պաշտպանության ոլորտում ձեռք է բերում որոշակի առանձնահատկություններ և տարբեր մասնակիցներին ներկայացնում է տարբեր պահանջներ:

Այսպես, օրինակ, եթե մեղադրողը հասկանա, որ մեղադրյալը սուտ ցուցմունք է տալիս, նա կարող է և պետք է գործի դնի իր տակտիկական հնարքների ողջ զինանոցը նրան մերկացնելու համար, իսկ պաշտպանը նման իրավասությամբ օժտված չէ. հակառակ դեպքում նա կհակասի իր էթիկային:

Փաստաբանական էթիկայի կարևորության մասին այսպես են գրել. «...Փաստաբանությունն առավել քան որևէ այլ մասնագիտություն կարիք է զգում համակարգված էթիկայի նորմերի»², քանի որ այս տեսակ մասնագիտությունն է պատասխանատու մարդասիրության և իրականության սկզբունքների համար³:

Մասնագիտական գրականության մեջ առկա է փաստաբանական էթիկայի հետևյալ բնորոշումը. «Փաստաբանական էթիկան կորպորատիվ կանոններով ամրագրվող փաստաբանական համախմբության անդամի պատշաճ վարքն է այն դեպքերում, երբ իրավական

¹ՌԴ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է. «Այն դեպքերում, երբ առաջանում է օրենսդրությամբ և սույն կանոնակարգի նորմերով չկարգավորվող իրավիճակ, ապա փաստաբանը պարտավոր է հետևել ձևավորված սովորույթներին և ավանդույթներին, որոնք համապատասխանում են բարոյականության ընդհանուր սկզբունքներին»:

Ընդ որում, այդ սովորույթները յուրաքանչյուր երկրում, կախված երկրի առանձնահատկություններից, տարբեր են: Օրինակ՝ ԱՄՆ-ում ձևավորված սովորույթի համաձայն՝ դատական նիստից առաջ պաշտպանը և հանրային մեղադրողը հանդիպում են և քննարկում իրենց պահանջների հետ կապված հարցերը: (St' u Murray P., Basic Trial Advocacy, Harvard, էջ 21):

² St' u Васьковский Е. В., Основные вопросы адвокатской этики, С-Петербург, 1895, էջ 283:

³ St' u Whilshere A. M., The elements of criminal law and procedure, London, 1996, էջ 27:

նորմերը չեն սահմանում նրա համար վարքի կոնկրետ կանոններ»¹:

Ընդհանուր առմամբ ընդունելի այս բնորոշումը, կարծում ենք, սակայն, ունի մեկ թերություն. չենք կարծում, որ փաստաբանական էթիկայի գործունեության ոլորտը պետք է սահմանափակել միայն իրավական կարգավորման բացակայությամբ: Մեր խորին համոզմամբ փաստաբանական էթիկայի բովանդակությունն առավել լայն է և այն պետք է բնորոշվի որպես ուղղակի փաստաբանի պատշաճ վարքի երաշխիք՝ այն դիտարկելով որպես վարքագծի նորմերի ամբողջություն, որը բարոյական բնույթ է հաղորդում փաստաբանի գործունեությանը: Այսինքն՝ փաստաբանի գործունեության մեջ փաստաբանական էթիկայի նշանակությունն այն է, որ վերջինս կոչված է ապահովելու փաստաբանի՝ իր պարտականությունների կատարման ընթացքում վարքը, նաև բարոյական բնույթ հաղորդել փաստաբանական գործունեությանը՝ այն համալրելով մարդասիրական բովանդակությամբ:

Քրեական գործերով պաշտպանի համար փաստաբանական էթիկան ունի նախ և առաջ պրակտիկ նշանակություն: Պաշտպանը հանդես է գալիս դատարանում, հասարակության առջև, հետևաբար, նրա գործունեության բարոյական կողմը ստանում է անհամեմատ առավել մեծ նշանակություն՝ առաջին պլան մղելով դաստիարակչական գործառույթը, որն ուղղված է անձի, նրա ինքնագնահատականի ձևավորմանը:

Դեռ շատ տարիներ առաջ՝ 1956 թվականին, Ա. Ֆ. Կոնին դնում էր փաստաբանական գործունեության մեջ էթիկայի պարտադիր դասավանդման հարցը՝ գրելով, որ նման դաստիարակությունը պետք է փաստաբանի համար ամուր զենք, հավատարիմ կողմնացույց լինի, որով զինված էլ փաստաբանը պետք է կյանք մտնի: «Ու եթե վաղուց արդեն հասուն դատական աշխատողը երկմտի՝ ինչպես վարվել այս կամ այն իրադրությունում ու հիշի բարոյական խրատները, որոնք ժամանակին իրենց ասվել են ամբիոնից, ամաչելով քարացած բար-

¹ Տե՛ս Ազարյան Ե. Ռ., Փաստաբանության հիմունքներ. Երևան, 2006 թ., էջ 130, Барщевский М. Ю., Адвокатская этика, Москва, 2000, էջեր 22, 23, Ароцкер Л. Е., Тактика и этика судебного допроса, Москва, 1969, էջ 9, Смоленский М. Б., Адвокатская деятельность у адвокатура в Российской Федерации. Ростов-на-Дону, 2004, էջ 71:

քերի վրա աննկատ ձևավորված ժանգից՝ կզինվի արիությամբ՝ վարվելով բարոյական ու դրանով փաստաբանական էթիկայի դասավանդմանը տալով կենսական անհրաժեշտ արդարացում»¹:

Ստացվում է, որ փաստաբանական էթիկայի առաջնային խնդիրը նախևառաջ փաստաբանի գործունեության բարոյական ուղենիշն է, որը դրսևորվում է ոչ թե կյանքի բոլոր դեպքերի համար պարտադիր բանաձևեր տալով, այլ փաստաբանի մոտ բարոյական գիտակցության, մտածելակերպի զարգացմամբ, նրա մեջ բարոյական սկզբունքների արմատավորմամբ, կոնֆլիկտային ու բարդ իրադրություններում փաստաբաններին աջակցմամբ ու դրա հիման վրա, փորձի ընդհանրացմամբ, վարքագծի նորմերի մշակմամբ: «Փաստաբանական էթիկայի խնդիրները, դատարանի, գործընկերների, այլ անձանց, հասարակության ու պետության առջև փաստաբանի պարտականությունների անշեղ կատարումն է, փաստաբան-պաշտպանի, պաշտպան-ներկայացուցչի և հասարակության ու պետության շահերի միջև հավասարակշռության հաստատումը»²:

Փաստաբանական էթիկայի բովանդակության մեջ կարելի է ներառել այնպիսի հարցեր, ինչպիսիք են վստահորդի գաղտնիքը չհրապարակելը, դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքը, փաստաբանության հեղինակության բարձրացումը, ապացույցներ գնահատելիս օբյեկտիվության դրսևորումը և այլն:

Եվրոպական ընկերակցության երկրների փաստաբանների վարքագծի ընդհանուր կանոնների նախաբանում նշվում է, որ փաստաբանի պարտականությունները չեն սահմանափակվում պարտքի

¹ Ст'ю Кони А. Ф., Нравственные начала в уголовном процессе, Избранные произведения, Москва, 1956, с. 68-69: Մեջբերումն ըստ Бойков А. Д., Этика профессиональной защиты по уголовным делам, Москва, 1978, էջեր 46-47:

Փաստաբանական էթիկա առարկայի կարևորությունը հաշվի է առնվել նաև ՀՀ փաստաբանների պալատի կողմից: Մասնավորապես, ՀՀ Փաստաբանների դպրոցում որպես Փաստաբանի թեկնածուների նախնական վերապատրաստման ուսումնական ծրագիր մշակվել է եռնթոյրգիային և մասնագիտական կարգավիճակին նվիրված դասընթաց: Դասընթացի հիմնական նպատակն է նպաստել փաստաբանի բարոյագիտական ուժին և որակական հատկանիշներին՝ միջազգային չափանիշներին և սկզբունքներին համապատասխան:

² Ст'ю Кучерена А. Г., Адвокатура, Москва, 2004, էջ 234:

բարեխիղճ կատարմամբ. նա ընդհանուր առմամբ պարտավոր է բարեխիղճորեն պաշտպանել այն անձանց շահերը, որոնց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն վստահված է իրեն: Այս ամենի հետ կապված փաստաբանի վրա դրված է պարտականությունների մի ամբողջ համալիր՝ ինչպես իրավական, այնպես էլ բարոյական բնույթի, որոնք հաճախ մտնում են փոխադարձ հակասությունների մեջ: Այս առումով դիպուկ է նշել Վ. Մ. Սավիցկին. «Եթե նպատակ հետապնդել կառուցել իրավաբանական մասնագիտությունների աստիճանակարգություն՝ ելնելով դրանց ներկայացուցիչների վրա ընկնող բարոյական սթրեսի ծանրությունից, առաջին տեղն առանց տատանումների կշռորհվի փաստաբանին»¹:

Հիրավի, քրեադատավարական պաշտպանությունը բավական ինքնատիպ գործունեություն է. պաշտպանն անընդհատ գործում է տակտիկական ռիսկի պայմաններում: Այստեղ նրա առջև ծառանում է երկընտրանք՝ ընտրել դեպի ծրագրավորված նպատակները տանող առավել հակիրճ, թող է ոչ միշտ օրենքի տառին համապատասխանող ուղին կամ պատվավոր անցնել օրինականության երբեմն «փշոտ» ճանապարհը:

Քրեական պաշտպանության ընթացքում պաշտպանի ներքին համոզմունքի և մասնագիտական պարտքի միջև կարող են առաջանալ ներանձնային հակասություններ՝ առաջ բերելով քննիչի, դատախազի և դատավորի մասնագիտությանը ոչ բնորոշ հակասական իրավիճակներ², որոնց հետևանքով էլ երբեմն փաստաբանական էթիկայի սահմանները չեն համընկնում հասարակության մեջ ընդունված բարոյականության սահմանների հետ: Խոսքն առաջին հերթին վերաբերում է պաշտպանի ներքին համոզմունքի խնդրին:

Այս տեսանկյունից գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ պաշտպանը բարոյականության նորմերը պահպանած կլինի, եթե իր պաշտպանյալի արդարացմանն ուղղված պաշտպանության գիծն ընտրի միայն այն դեպքում, երբ բարեխիղճորեն համոզված է իր պաշտպանյալի անմեղության մեջ³:

¹ St' u Савицкий В. М., Презумция невинности, Что означает? Кому нужна? Как применяется? Москва, 1997, էջ 71:

² St' u Шиханцов Г. Г., Юридическая психология, Москва, 1998, էջեր 243-244:

³ St' u Синайский Э. Д., Развитие этических основ в деятельности адвокатуры, Материалы к научно-практической конференции «Об эффективности судебной защиты», Ленинград, 1966, էջ 82:

Թերևս նպատակահարմար ենք համարում նախ քննարկել այս դրույթից բխող հաջորդ հարցադրումը, ըստ որի որքանով է կասկածյալի, մեղադրյալի նպատակը՝ խուսափել քրեական պատասխանատվությունից կամ պատասխանատվությունը մեղմացնելը տեղավորվում է թիկլայի և օրինականության շրջանակներում: Այսպես, Ա. Պ. Չելցովը կարծում է, որ պաշտպանյալի շահն արդարացված չէ բոլոր այն դեպքերում, երբ նա իրականում հանցագործ է¹: Սակայն, բարեբախտաբար, գրականության մեջ որպես հիմնական միտում եղել և շարունակում է մնալ այն, որ մեղադրյալի՝ առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու ձգտումը՝ անկախ իրականում հանցանք կատարած լինելու փաստից, տեղավորվում է օրինականության և փաստաբանական էթիկայի շրջանակներում²: Նշված հայեցակարգը, որը մեր տարածաշրջանային երկրներում առավել զարգացավ անկախության տարիներից հետո, իսկ զարգացած իրավական ավանդույթներ ունեցող արտասահմանյան մի շարք երկրներում՝ դեռևս 19-րդ դարից³, արդարացիորեն բխեցնում է անհատական շահը հանրային կամ պետական շահից⁴: Դա արդարացված է այնքանով, որքանով որ հանրությունը, հասարակությունը պաշտպանված են, բացառապես եթե պաշտպանված է դրա յուրաքանչյուր անհատ առանձին: Չի կարելի խոսել ամբողջի պաշտպանության մասին, եթե ամբողջը կազմող առանձին մասնիկներ թողնված են պետական մարմինների քմահաճույթին: Հանրայնությունն արտահայտում է պետական իշխանության և մասնավոր անձնաց շահերի «համերաշխությո-

¹ St' u Чельцов А. М., Некоторые вопросы защиты в свете Основ, Госюриздат, 1951, էջ 23: Մեջբերումն ըստ Синайский Э. Д., Развитие этических основ в деятельности адвокатуры. Материалы к научно-практической конференции «Об эффективности судебной защиты», Ленинград, 1966, էջ 84:

² St' u, օրինակ, Жезнер Е., Сорокин Н., Каким должно быть положение об адвокатуре? // Советская юстиция № 1, 1960, էջ 64, Стецовский Ю. И., Формирование процессуальной позиции адвоката // Советская государство и право, № 10, 1969, էջ 102, Киселев Я. С., Этика адвоката (нравственные основы деятельности адвоката в уголовном судопроизводстве), Ленинград, 1974, էջ 24:

³ St' u, Smith T., Zealous Advocates: the historical foundations of the adversarial criminal defence lawyer, Law, Crime and History, (2012)1, էջեր 18-19:

⁴ St' u Леви А. А., Игнатьев М. В., Капица Е. И., Особенности предварительного расследования преступлений, осуществляемого с участием адвоката, Москва, 2003, էջ 10:

յունը» քրեադատավարական նպատակներին հասնելու հարցում¹, իսկ քրեական դատավարության առաջնային նպատակներից է անմեղ անձանց դատապարտման անթույլատրելիությունը: Իսկ դատական ճշմարտության տեսանկյունից անձն անմեղ է համարվում ոչ միայն այն դեպքում, երբ օբյեկտիվորեն հանցանք չի կատարել: Այս համատեքստում ինքնըստինքյան բախվում ենք քրեական դատավարության անկյունաքարային սկզբունքներից անմեղության կանխավարկածին:

Քրեական դատավարությունում անմեղության կանխավարկածի նշանակությունը հակադրվելն է այն ամենին, ինչը բովանդակում է «սուբյեկտիվիզմ» կամայականություն, մեղադրական թեքվածություն: Անմեղության կանխավարկածի սկզբունքը հաստատում է անձի օբյեկտիվ կարգավիճակը: Պետությունը, հասարակությունը գտնում են, որ անձը բարեխիղճ է այնքան ժամանակ, քանի դեռ օրենքով սահմանված կարգով այլ բան ապացուցված չէ: Անձը, ով ներգրավվել է որպես մեղադրյալ, հասարակության կողմից դիտվում է ոչ թե որպես հանցագործ, այլ հանցագործության մեջ մեղադրվող ենթադրյալ հանցագործ:

Այժմ վերադառնանք առաջին հարցադրման հետ կապված առաջարկված տեսակետի քննադատությանը. մասնավորապես, չենք կարող անտեսել այն հանգամանքը, որ պաշտպանի մոտ համոզմունքը ձևավորվում է բոլոր այն հանգամանքների լույսի ներքո, որոնց ծանոթ են նաև մեղադրողն ու դատարանը: Հետևաբար, ոչնչով արդարացված չի լինի պաշտպանին զրկել իր սուբյեկտիվ վերաբերմունքի հնարավորությունից՝ միաժամանակ նրան ստիպելով առաջնորդվել իր ներքին համոզմունքով:

Մոտ 150 տարի առաջ դատավարագետները համոզված էին, որ քրեական պաշտպանության ընթացքում պաշտպանը չպետք է առաջնորդվի իր զգացմունքներով և համոզմունքներով. նա պետք է լինի սառնասիրտ և երբևէ տուրք չտա իր համոզմունքներին, եթե անգամ իր պաշտպանյալը մեղավոր է, բայց չէ՞ որ պաշտպանը պաշտպանյալի ոչ դատավորն է, ոչ մեղադրողը²:

¹ St' u Смирнова И. Г., Интерес-понятие уголовно-процессуальное // Государство и право, № 8, 2008, էջ 17:

² St' u Harris R., Hints on Advocacy intended for the practitioners in civil and criminal courts, St. Louis, 1881, էջեր 119-120:

Իսկ 1660 թվականին գործող էթիկայի կանոնների («Պարոն Սաթյու Հեյլի կանոններ») 4-րդ կետում նշվում էր. «Պաշտպանության ընթացքում ես պարզապես պետք է մի կողմ դնեմ իմ զգացմունքները՝ ոչ մի կերպ տուրք չտալով դրանց»¹, ուստի ամերիկյան փաստաբանը, որքան էլ համոզված լինի իր պաշտպանյալի մեղավորության մեջ, այնուամենայնիվ պաշտպանությունն իրականացնում է թեկուզ իր խղճին հակառակ²:

Փաստորեն, ստացվում է, որ փաստաբանական էթիկայի համատեքստում ամբողջապես արդարացված է «ակնհայտ ենթադրյալ հանցագործի» պաշտպանությունը³: Այսպես, պաշտպանը, որքան էլ վստահ և համոզված լինի, որ հանցագործը հենց նույն անձն է, ում ինքը պաշտպանում է, այնուամենայնիվ, իրավասու չէ հրաժարվել պաշտպանությունից⁴ կամ մեղադրել իր պաշտպանյալին, քանի որ

¹ St' u Warvelle G.V. Essays in legal ethics, Chikago, 1902, էջեր 207-208:

² St' u Parry A.E. The seven lamps of Advocacy, By his Honour Judge, New York, 1968, էջ 17:

³ Այս ինդրի հետ կապված տե՛ս 1840 թվականի Քոուրվոիզիերի գործը (Defense of Courvoisier), երբ պաշտպանը ենթարկվեց հասարակական շատ լուրջ պարսավանքի ակնհայտ մեղավոր անձին պաշտպանելու և արդարացնելու համար (տե՛ս Warvelle G.V. Essays in legal ethics. Chikago, 1902, էջ 211 կամ Harris R. Hints on advocacy, intended for practioners in civil and criminal courts. St. Louis, 1881, էջեր 155-156):

⁴ «Շվեյցարիայում փաստաբանների ազատության մասին» Շվեյցարիայի օրենքի համաձայն պաշտպանն իրավասու է հրաժարվել և՛ քաղաքացիական, և՛ քրեական գործերից: Պարզապես քրեական գործից հրաժարվել թույլատրվում է միայն մինչդատական վարություն և ոչ երբեք դատական քննության փուլում (տե՛ս Maryra П., Адвокатура Швейцарских кантонов // Новая адвокатская газета, № 11, 2008, էջ 21): Իսկ անգլոսաքսոնական իրավունքի երկրներում հրաժարում թույլատրվում էր միայն երիտասարդ մինչև 2 տարվա փաստաբանական փորձ ունեցող փաստաբաններին, ովքեր չէին կարողանում գլուխ հանել գործից դրա բարդության պատճառով (տե՛ս Robbins A. H. A treatise an American Advocacy (based upon standasd English treatise, entitled hints on Advocacy, by Richard Harris). St. Louis, 1904, էջ 223):

Փաստաբանական կոլեգիայի խորհրդի նախագահ Ռ. Մուլլերատն առաջարկում է, որ վաղուց արդեն ժամանակն է դուրս գալ կաղապարներից և պետք է փաստաբանին ցանկացած գործով և ցանկացած ժամանակ հրաժարվելու հնարավորություն ընձեռել. դա ավելի շատ է համապատասխանում լիբերալիզմի և հումանիզմի պահանջներին (տե՛ս Муллерат Р., Незави-

այդ դեպքում դատավարությունը կունենա ոչ թե երկու, այլ երեք կողմ: Պաշտպանի մասնագիտական պարտականությունն է պաշտպանել իր պաշտպանյալի շահերը¹, եթե անգամ նա հաստատապես գիտի փաստաբանական գաղտնիքի կամ դրա մասին հավաստող ապացույցների ուժով, որ իր պաշտպանյալը մեղավոր է: Այսպիսին է նաև Նյու Ջերսի նահանգի Գերագույն դատարանի դիրքորոշումը²: Բհարկե, լինում են գործեր, երբ պաշտպանություն իրականացնելը շատ հեշտ է, քանի որ թույլ է մեղադրանքի կողմը: Սակայն չի կարելի առանց պաշտպանության իրավունքի թողնել այն անձանց, ում մեղքը հաստատվում է հիմնավոր ապացույցներով³: Թերևս խորհրդային որոշ փաստաբաններ իրենց պրակտիկայում ելնում էին այն կանխադրությից, որ որքան դժվար է պաշտպանություն իրականացնելը, ուրեմն այդքան դրա կարիքը չի զգում մեղադրյալը⁴:

Սակայն, ինչում էլ տեսնենք պաշտպանության նպատակն ու ելությունը, միննույն է փաստաբանությունն ինքնին արդարադա-

симость-основной принцип юридической этики // Газета адвокатура, № 11, 1996, էջեր 2-6):

¹ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության գործող օրենսգիրքը «շահ» հասկացությունն օժտել է «օրինականություն» հատկանիշով (օրինակ՝ 68-րդ, 73-րդ հոդվածներ)՝ նախատեսելով, որ պաշտպանը պետք է պաշտպանի միայն օրինական շահերը: Բսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նախագիծը «շահ» հասկացությունն օժտել է «իրավաչափության» հատկանիշով (օրինակ՝ 44-րդ, 49-րդ հոդվածներ):

Այնուամենայնիվ, մեր մոտեցումը այն է, որ մեղադրյալի ձգտումը պաշտպանվել առաջադրված մեղադրանքից միշտ էլ օրինական է և իրավաչափ, քանի դեռ առկա չէ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը: Հետևաբար, էթիկայի շրջանակներում ամբողջապես տեղավորվում է այն, որ պաշտպանը պետք է պաշտպանի իր վստահորդի ցանկացած շահ՝ առանց նախապես գնահատական տալու դրա օրինական կամ իրավաչափ լինելուն: Այլ կերպ ասած՝ անմեղության կանխավարկածը ենթադրում է օրինականության և իրավաչափության կանխավարկած:

² *St. u. Case of state v. Raymond (1971), Pressler S. B., Rules governing the courts of the state New Jersey, amendments to September 1, 1998, էջ 777:*

³ *St. u. Зайцев Е., Вопросы морали и защите по уголовным делам // Советская юстиция, 1963, № 22, էջ 14:*

⁴ *St. u. նույն տեղում:*

տության գործոն է, դեռ ավելին՝ արդարադատության գրավական: Այնտեղ, որտեղ կա պրոֆեսիոնալ մեղադրանք, արդարադատությունը պահանջում է դրան հավասարաթեք անտագոնիզմ՝ պրոֆեսիոնալ պաշտպանություն:

Բարձրացված հարցի շրջանակներում նպատակահարմար է նաև քննարկել գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, համաձայն որի՝ դատախազի և դատարանի հետ մեկտեղ հանդիսանալով արդարադատության քուրմ¹, պաշտպանն իրավունք չունի դատարանից թաքցնելու պաշտպանյալի՝ հանցանք կատարած լինելու փաստը, եթե ինքն այդ մասին տեղեկանում է պաշտպանյալից կամ հանգում այդ համոզման գործի նյութերն ուսումնասիրելիս, անգամ եթե պաշտպանյալը հերքում է այդ փաստը: Այս տեսակետը հիմնավորվում է նրանով, որ այս պարագայում անօրինական են ոչ միայն պաշտպանյալի շահերն, այլև պաշտպանության միջոցներն ու մեթոդները², իսկ պաշտպանն էլ ոչ մի *հրավունք չունի* իր ներքին համոզմանը հակառակ գործարքների մեջ մտնելու իր խղճի հետ և խաբելու դատարանին ու արդարադատությանը³: Նման պայմաններում գործող պաշտպանը նմանեցվում է այն բժշկին, ով բուժման ընթացքում առաջնորդվում է ոչ թե իր գիտելիքներով, այլ հիվանդի խորհուրդներով⁴: Այդուհանդերձ, նույն անմեղության կանխավարկածը թելադրում է առաջնորդվել «պաշտպանն իր պաշտպանյալի դատավորը չէ»⁵ պոստուլատով:

¹ St' u Адвокат в уголовном процессе, под ред. П. А. Лупинской, Москва, 1997, էջ 32:

² Որպես այս դիրքորոշման հիմնավորում՝ հեղինակը բերում է հետևյալ օրինակը. սպանություն կատարած մեղադրյալը հայտարարում է վկայի մասին, որը կարող է հաստատել իր այլուրեքությունը. այս պարագայում ակնհայտ է, որ վկայի ցուցմունքները սուտ են (տե՛ս Гольдинер В. Д., Защитительная речь, Москва, 1970, էջ 5):

³ St' u, օրինակ, Назаров Л., Соколов Т., Повышать авторитет советской адвокатуры // Советская юстиция № 7, 1959, էջ 18, Горский Г. Ф., Котов Д. П., Судебная этика, Воронеж, 1973, էջ 171:

⁴ St' u Этика предварительного следствия, ред. колл. Гаврилов А.К., Астусенко В. Г. и др., Волгоград, 1976, էջ 120:

⁵ St' u օրինակ, Леоненко В. В., Профессиональная этика участников уголовного судопроизводства, Киев, 1981, էջ 109, Кобликов А. С., Юридическая этика. Москва, 1999, էջ 129:

Համաձայն ենք, որ պաշտպանի առկայությունն արդարադատության անփոխարինելի գրավականներից է, բայց չմոռանա՞նք, որ պաշտպանն աջակցում է արդարադատությանը միակողմանիորեն¹ ոչ թե օբյեկտիվ իրականության, այլ վստահորդի պաշտպանության համատեքստում. «պաշտպանը «պարտիզան» փաստաբան է, այլ ոչ թե փաստերն անկողմնակալ վեր հանող»²:

Որոշ հեղինակներ անգամ անտեսում են արդարադատությանը նպաստելու փաստաբանի դերն ու նշում, որ քրեական գործերով պաշտպանն ունի միայն մեկ դեր, այն է ջանասիրաբար ներկայացնել իր վստահորդին՝ օրենքի շրջանակներում, և հաստատում են, որ քրեական վարույթում պաշտպանի դերը մեղադրյալին պաշտպանելն է հանրային մեղադրանքից: Եվ որ հենց այս դերն է կանխորո-

¹ Այս տեսանկյունից միանշանակ անընդունելի է ՀՀ փաստաբանների վարքագծի կանոնագրքի 2.5-րդ կետում ամրագրված այն դրույթը, համաձայն որի՝ «Որպեսզի փաստաբանն իր գործունեությունն իրականացնի անկաշկանդ, անկախ և *արդարատություն իրականացնելու իր պարտականության* հետ համահունչ (...)»: Բնականաբար, նման ձևակերպումը նախ ուղղակի հակասում է ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածին, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրության և օրենքներին համապատասխան»: Բացի այդ նման ձևակերպումը չի համապատասխանում փաստաբանի՝ քրեական դատավարությունում ունեցած դերին: Կարելի է փաստաբանից պահանջել, որ նա իր գործողություններով նպաստի ճշմարտության բացահայտմանը, հետևաբար և արդարադատության իրականացմանը, բայց ոչ երբեք նրա վրա պարտականություն դնել իրականացնել արդարադատություն (բարեբախտաբար, նույն կանոնագրքի 1.1-րդ, 2.3.2-րդ կետերում արծարծվում է այն գաղափարը, որ փաստաբանը ծառայում է արդարադատությանը):

Քրեական գործերով պաշտպանի դերին ու նշանակության վերաբերող ամերիկյան տեսական կարգավորումներն ավելի մանրամասն տե՛ս Flowers R. K., Role of the Defense Attorney: Not just an Advocate, Ohio State Journal of Criminal Law, 2010, Volume 7, էջ 647:

² Տե՛ս Flowers R. K., Role of the Defense Attorney: Not just an Advocate, Ohio State Journal of Criminal Law, 2010, Volume 7, էջ 648, Geoffrey C, Hazard JR., Susan P., K., Roger C. C. The law and ethics of lawyering, New York, 1994, էջ 447, Perrin Th., L., The Perplexing Problem of Client Perjury, Fordham Law Review. 2007, էջեր 1707–1708:

շում պաշտպանի բարոյական պարտականությունները¹:

Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ, եթե մինչեղավոր-խական փաստաբանների թեզը եղել է «անձի պաշտպանությունը հասարակության դեմ», խորհրդային փաստաբաններինը՝ «անձի պաշտպանությունը նրան հասարակություն վերադարձնելու համար», արդի իրավագիտակցության մակարդակը պահանջում է որդեգրել «անձի պաշտպանությունը հանուն հասարակության պաշտպանության» գաղափարախոսությունը:

Փաստաբանի բարոյական կասկածների ու տառապանքների մասին հետաքրքիր է արտահայտվել պաշտպան Մ. Գ. Կազարինովը Բագունովի և Արոնսոնի գործերով. «Կան գործեր, որոնք համակրելի չեն պաշտպանության համար, բայց մտածել, որ դրանց մասնակցությունը ստվեր է գցում պաշտպանի վրա, անընդունելի է և նշանակում է չըմբռնել պաշտպանական հավատո հանգանակի սկզբնատառը: Հենց նման գործերում է անհրաժեշտ լուսավորյալ, անձնագոհ պաշտպանի մասնակցությունը, որի խնդիրն է անբաստանյալի և դատավորի միջև վերականգնել բարոյական խզված կապը, ցույց տալ, որ ամբաստանյալը որքան էլ ցածում հայտնված լինի, համենայն դեպս մարդ է՝ Աստծո կնիքով. հարկ է նրա նկատմամբ առաջացնել դատողների կարեկցանքը և հակառակը բորբոքել նրա մեջ գղջում, հավատ, սեր մարդկանց նկատմամբ, մեղմացնել նրա ճակատագիրը՝ աղերսանքով ձեռք բերելով հուղարկավորողի պսակ հիշեցնող հաշտեցնող հանդուրժողականության խոսքը»²:

Ի վերջո, կարող ենք փաստել, որ ըստ էության, քրեական պաշտպանության ընթացքում բարդ էթիկական խնդիրներն ի հայտ են գալիս այն կոնֆլիկտների հետևանքով, որոնք ծագում են պաշտպան-պաշտպանյալ, պաշտպան-իրավական համակարգ, ինչպես նաև պաշտպանի և սեփական շահերի փոխհարաբերությունների համատեքստում:

¹ St' u Flowers R. K., Role of the Defense Attorney: Not just an Advocate, Ohio State Journal of Criminal Law, 2010, Volume 7, էջ 648:

² St' u Речи известных русских юристов. Москва, 1985, էջ 170:

ПРОЯВЛЕНИЯ АДВОКАТСКОЙ ЭТИКИ ПРИ ЗАЩИТЫ УГОЛОВНЫХ ДЕЛ

В рамках уголовного дела человек обвиняется в совершении определенного преступления... а адвокат вправе защищать только в том случае, если он абсолютно уверен в его невиновности... или также, когда он абсолютно уверен в виновности своего подзащитного...

Именно этот вопрос является причиной неоднозначного отношения к институту защиты. Для решения этой проблемы и других вопросов, вытекающих из этой проблемы, в первую очередь необходимо учитывать, что этические нормы адвокатского общества иногда не совпадают с моральными нормами общества, а получают другие плени и границы. В подобных обстоятельствах деятельность адвоката постоянно сталкивается со сложными противоречиями между профессиональным долгом и внутренним убеждением защитника. И это естественно, поскольку адвокат является «сторонником» лица, нарушившего общественные нормы.

Неужели адвокат вправе защищать и требовать оправдание только для невинного?... А в каком случае человек невиновен?... Неужели только когда он объективно не совершал преступления?... А кто может знать, совершал он преступление или нет?...

Anahit Harutyunyan
PHD Student of the YSU Chair of Criminal procedure and Criminalistics Chair

ISSUES OF ADVOCACY ETHICS IN CRIMINAL DEFENCE

A person who is accused in certain crime goes through trial process of criminal case... The defender is entitled to defend only when he is sure in the innocence of his defendant...

Proper attention has not been paid to this issue, which brings about an unequivocal attitude in the institute of advocacy. In order to try to treat this problem as well as the ones caused by it first of all we should

consider that the norms of ethics get other patterns and outlines and do not coincide with the moral norms of advocacy society. In such situations defender's activity is continuously guided by the contradiction of professional depts and inner believes because the latter is considered to be the «ally» of person who has broken the rules of society.

Is the defender entitled to defend and demand justification only for innocent people?... And when is a person innocent?... Whether only in case when he has not committed a crime?... And who can claim the accused person has or has not committed a crime?...

Բանալի բառեր՝ քրեական պաշտպանություն, ոչ իրավաչափ, քրեական վարույթ, հակասություն, փաստաբանական էթիկա, արդարադատություն, շահ:

Ключевые слова: уголовная защита, неправомерный, уголовное судопроизводство, противоречие, этика адвоката, правосудие, интерес.

Key words: criminal defense, criminal justice, contradiction, advocate ethics, justice, interest.